INTERPOL

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2016

ԿԻԲԵՐՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

DARKNET

Հանցագործներն ավելի ու ավելի են օգտագործում DARKNET-ը անօրինական գործողություններ կատարելու համար: Քրեական ոստիկանության միջազգային կազմակերպությունը՝ Ինտերպոլն իր անդամ երկրներին աջակցելու նպատակով կազմակերպել է Ինտերնետով իրականացվող հետաքննությունների, կրիպտովալյուտայի կեղծ օգտագործման, դրանց վերլուծությունների, նման հետաքննությունների ընթացքում հանդիպող իրավական բնույթի դժվարությունների և միջազգային համագործակցությանը վերաբերող դասընթացներ:

Titanium նախագիծ

Եվրոպական հանձնաժողովի հովանավորությամբ՝ հետազոտությունների և նորարարությունների «Հորիզոն 2020» ծրագրի շրջանակներում, Ինտերպոլը ընդգրկված է պետական և մասնավոր սեկտորից կազմված այս նախագծում, որի նպատակներն են՝

- Իրավապահ մարմիններին տրամադրել նոր գործիքներ և նոր տեխնոլոգիաներ վիրտուալ փողի և ընդհատակյա շուկաների օգնությամբ կատարվող հանագործություն-ների շրջանակներում իրականացվող քննությունների համար:

- Փորձարկել նոր գործիքները իրավապահ մարմինների հետ:

- Մշակել ծրագրեր, մասնավորապես վերապատրաստման ոլորտում, ինչպես նաև համատեղ վարժություններ՝ նպատակ ունենալով կիրառել նոր գործիքներն ու նոր տեխնոլոգիաները:

Ֆինանսական խարդախություն: “Mike”-ի ձերբակալումը:

Եվրոպական հանձնաժողովի հովանավորությամբ Ինտերպոլը 2016թ-ին համատեղ օպերացիա է կազմակերպել Նիգերիայում իրականացված տնտեսական և ֆինանսական բնույթի հանցագործությունների վերաբերյալ, որի ընթացքում ձերբակալվել է «MIKE»-ը, ով միջազգային այն հանցավոր խմբի ղեկավարն էր, որը էլեկտրոնային հաղորդագրությունների միջոցով խարդախություններ էր կատարել:

ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐ

Ոստիկանությունը միայնակ չի կարող պայքարել կիբերհանցավորության դեմ: Անհրաժեշտ է, որպեսզի ոստիկանությունը համատեղի իր ռեսուրսներն ու փորձառությունը մասնավոր սեկտորի հետ: 2016թ-ին Ինտերպոլը համագործակցության պաշտոնական համաձայնագրեր է կնքել մասնավոր սեկտորի գործընկերների հետ, որոնց թվում են՝

-Barkleys,

-Cellebrite,

-TNO-Կիրառական գիտական հետազոտություններ իրականացնող նիդեռլանդական կազմակերպությունը:

.

ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅՈՒՆ

ԿԵՆՍԱՉԱՓԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ

2016թ-ին Ինտերպոլը մոդեռնիզացրել է մատնահետքերի համեմատման և ճանաչման իր ավտոմատ համակարգը՝ իրականացվող ստուգումներն ավելի արագ կատարելու նպատակով:

Ներկայումս այդ համակարգը հնարավորություն ունի օրական հազարավոր մատնահետքերով որոնումներ իրականացնել՝ նախկինում հարյուրավոր մատնահետքերի նկատմամբ որոնումներ իրականցնելու հնարավորության համեմատ: Սա թույլ է տալիս Ինտերպոլին րոպեների ընթացքում պատասխանել անդամ երկրների հարցումներին:

Հեռախոսազանգերի ընթացքում, ինչպես նաև Ինտերնետի միջոցով և սոցիալական ցանցերում արձանագրվող ձայների նույնացումը հնարավորություն է տալիս ոստիկանությանը ճանաչել և գտնել հանցագործներին:

ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԱՀԱԲԵԿԻՉՆԵՐԻ ՊՐՈՖԻԼՆԵՐԸ

2016թ-ի տարեվերջի դրությամբ ավելի քան 13.300 օտարերկրյա ահաբեկիչների տվյալներ են տրամադրվել Ինտերպոլի անդամ երկրներին՝ քննություններ, ստուգումներ և սահմանային վերահսկողություն իրականացնելու նպատակով:



Ահաբեկչության դեմ պայքարի պլան

Յուրգեն Շտոկ, ԻՆՏԵՐՊՈԼԻ Գլխավոր քարտուղար

1

Տեղեկատվության տրամադրում

Արտասահմանից ստացվող տեղեկություններին մուտք ունենալը շատ կարևոր է անվտանգությունն ապահովելու գործում, որի նպատակն է խոչընդոտել ահաբեկիչների ազատ տեղաշարժը և ղեկավարել նրանց գործունեությանն աջակցող ցանցերին:

2

Տեղեկատվության տրամադրում առաջին գծում գտնվողներին

Օտարերկրյա ահաբեկիչներին հայտնաբերելու նպատակով համաշխարհային մակարդակով պայքարելիս կան վտանգավոր խնդիրներ, որոնք վերաբերում են նաև Ինտերպոլի տվյալների պահոցներով ստուգումներ իրականացնելուն, և առաջին գծում ծառայություն իրականացնող ոստիկաններին տրամադրվող տեղեկությունները ամբողջական չեն լինում:

3

Վերապատրաստում

Գնալով ավելի ու ավելի է դժվարանում ամբողջ աշխարհում հարձակումները կանխատեսելը:

Այս իրավիճակը պահանջում է հնարավորինս արագ որոշումներ կայացնել առաջնայի գծում և սահմաններում:



ՄԱՐԴԿԱՆՑ ԱՊՕՐԻՆԻ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄ ԵՎ ՄԻԳՐԱՆՏՆԵՐԻ ԱՊՕՐԻՆԻ ՏԵՂԱՓՈԽՈՒՄ

2016թ-ին գրանցվել է համաշխարհային մակարդակով միգրացիայի աննախադեպ աճ, որը կապված է մի շարք գործոնների հետ: Դրանցից են ընթացող հակամարտությունները, աղքատությունը և տնտեսական անկայունությունը: Միգրացիոն ամենամեծ հոսքերը, շուրջ 365.000 միգրանտներով, ժամանել են Եվրոպա, հիմնականում Միջին Արևելքից և Աֆրիկայից՝ Բալկաններով և Արևելյան Եվրոպայի ցամաքային ուղիներով, կամ Թուրքիայից և Հյուսիսային Աֆրիկայից՝ ծովային ուղիներով: Նշված ուղիները հղի են բազմաթիվ վտանգներով: 2016թ-ին մոտավորապես 4.700 միգրանտ է մահացել ծովով Եվրոպա մեկնելիս:

Կազմակերպված հանցավորությամբ զբաղվող անդրազգային ցանցերը ճգնաժամից իրենց օգուտներն են քաղում: Զեկույցները ցույց են տալիս, որ միգրանտների մեծ մասը գումարներ է ծախսում իրենց տեղաշարժը հեշտացնելու նպատակով: Միգրանտների ապօրինի տեղափոխման համար օգտագործվող ավանդական մեթոդները, ինչպիսիք են ինքնությունը թաքցնելը, կեղծ փաստաթղթեր կամ վտանգավոր տրանսպորտի միջոցներ օգտագործելը կիրառվում են բոլոր տարածաշրջաններում:

Մարդկանց շահագործումը, որը միջազգային կազմակերպված հանցավորության մաս է կազմում, միլիարդավոր դոլարների հետ է կապված և վերաբերում է բոլոր տարածաշրջաններին ու սերտորեն առնչվում է այս հարցին: Դեպքերի մեծամասնությունում կանայք, տղամարդիկ և երեխաները ենթարկվում են թրաֆիքինգի՝ սեռական շահագործման և հարկադիր աշխատանքի նպատակով:

Երեխաների առևանգման դեպքեր գրանցվել են բոլոր երկրներում և բոլոր տարածաշրջաններում: Դա կարող է շատ արագ դառնալ միջազգային խնդիր, եթե տուժողները հատում են սահմանները: Ամբողջ աշխարհի իրավապահ մարմիններին մտահոգում է առևանգումները, ծնողների կողմից երեխաների առևանգումները և երեխաների տեղաշարժը դեպի հակամարտության գոտիներ: Որպեսզի համաշխարհային խնդրի մասին բոլորը իրազեկվեն, Ինտերպոլը կազմակերպել է երեխաների առևանգումների վերաբերյալ հանդիպում Փարիզի ոստիկանության բարձրագույն դպրոցի և Եվրոպական իրավունքի նոտարական կենտրոնի հետ՝ Ֆրանսիայի Lyon 3 համալսարանի իրավաբանական ֆակուլտետի աջակցությամբ: Հանդիպման ընթացքում որոշում է կայացվել, որ դեղին անկյունով քարտերը, որոնք հրատարակվում են անհայտ կորած անձանց վերաբերյալ ոստիկանությանը ահազանգելու համար, անմիջապես հրատարակվեն երեխաների անհետ կորելու դեպքում:

INTERPOL

ԴԵՂԻՆ ՔԱՐՏ

2016 ընթացքում հրատարակված

2,675

Վավեր քարտեր

8,862

Ինտերոլի քարտերը համագործակցության կամ ձերբակալման նպատակով միջազգային հարցումներ են, որոնք հնարավորություն են տալիս Կազմակերպության անդամ երկրներին հանցագործությունների վերաբերյալ տեղեկություններ փոխանակել:
Կարմիր անկյունով քարտը անձին հայտնաբերելու և ձերբակալելու հայտ է՝ մինչ վերջինիս էքստրադիցիայի ենթարկելը:

INTERPOL

ԿԱՐՄԻՐ
ՔԱՐՏ

2016թ. ընթացքում հրատարակված

12,878

Վավեր քարտեր

47,265

I-Checkit նախաձեռնությունը

Ինտերպոլի I-Checkit նախաձեռնությունը հնարավորություն է տալիս օդային տրանսպորտային մասնավոր սեկտորի գործընկերներին իրենց ուղևորների անձնագրերի տվյալները ուղարկել Ինտերպոլին՝ SLTD պահոցով ստուգումներ իրականացնելու նպատակով: Դա ամրապնդում է անվտանգությունը սահմաններում՝ մինչ ճամփորդների ուղևորությունը սկսելը: Գիտակցելով այսպիսի անվտանգության անհրաժեշտությունը՝ անդամ երկրները 2016թ-ին Ինտերպոլի Գլխավոր ասամբլեայի ընթացքում որոշում է կայացվել I-Chekit նախագիծը ընդլայնել՝ այն տրամադրելով ծովային սեկտորին: Այս ոլորտում առաջին գործկերն է Carnival Corporation-ը, որը I-Chekit համակարգն ընդգրկել է շոգենավերով ճանապարհորդության մեկնող ուղևորների ստուգման գործընթացում:

ԿՈՐԱԾ /ԳՈՂԱՑՎԱԾ ՃԱՄՓՈՐԴԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ SLTD ՊԱՀՈՑ

Օդանավակայաններում և ցամաքային սահմանային անցակետերում անդամ երկրները կարող են ստուգել անձնագրերը Ինտերպոլի SLTD պահոցով, որը հնարավորություն կտա հայտնաբերել կեղծ կամ գողացված հայտարարված փաստաթղթերը:

ԳՐԱՆՑՈՒՄՆԵՐ



1.7 Տրիլիոն որոնումներ

159,000 համընկնումներ

175 պահոցն օգտագործած երկրների թիվը

48.5% Իրականացվել է Եվրոպական երկրների կողմից

(**848** միլիոն)

«Անցնել նեղուցը» օպերացիան

Գողացված ավտոմեքենաները հաճախ մի տարածաշրջանից մյուս տարածաշրջան են տեղափոխվում վերավաճառելու, ավտոպահեստա մասերն օգտագործելու կամ դրանցով այլ ծանր հանցագործություններ կատարելու նպատակով:. «Անցնել նեղուցը» օպերացիան, որի թիրախը ավտոմեքենաները Եվրոպայից Հյուսիսային Աֆրիկա տեղափոխելու նպատակով հանցավոր կազմակերպությունների կողմից օգտագործվող ճանապարհն էր, Իսպանիայի ազգային ոստիկանությանը հնարավորություն տվեց այդ երկրի հարավային նավահանգիստներում Ինտերպոլի գողացված ավտոմեքենաների տվյալների պահոցով ստուգումներ իրականացնել շուրջ 3.000 ավտոմեքենաների նկատմամբ: Ստուգումների արդյունքում նույնացվեցին և հայտնաբերվեցին 20 գողացված ավտոմեքենաներ, ինչպես նաև այնպիսի տեղեկություններ ձեռք բերվեցին, որոնք թույլ կտան նույնացնել այս հանցատեսակով զբաղվող հանցավոր ցանցերին:

Ինտերպոլի՝ Գողացված ավտոտրանսպորտային միջոցների տվյալների պահոց

Հաշվառումների թիվը **7.2** միլիոն

Որոնումների թիվը **191** միլիոն

128 երկրներ տրամադրել են տվյալներ

Մշակութային ժառանգությունը հակամարտության գոտիներում

Մշակութային արժեքների հափշտակությունը, դրանց ապօրինի շրջանառությունն ու ապօրինի վաճառքը, մասնավորապես Միջին Արևելքի հակամարտության գոտիներից, ավելի մեծ կարևորություն է իրենից ներկայացնում՝ 2015թ-ին ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի կողմից թիվ 2199 բանաձևի ընդունումից հետո, որով անմիջական կապ է հաստատվում այդ տարածաշրջանում մշակութային արժեքների ապօրինի շրջանառության և ահաբեկչության ֆինանսավորման միջև, է ակնհայտորեն խոչընդոտում է այս տեսակ առևտուրը Դաեշի և մյուս ահաբեկչական միավորումների միջև:

Այս սպառնալիքին դիմակայելու նպատակով Ինտերպոլը և ՅՈՒՆԵՍԿՕ-ն Լիբանանում հանդիպում են կազմակերպել, որպեսզի ներկայացնեն մշակութային արժեքների ապօրինի շրջանառության տարածվածությունը, գնահատեն ՄԱԿ-ի կողմից ընդունված որոշման կիրառումը և միավորեն տարբեր կազմակերպությունների փորձը՝ նպատակ ունենալով օգնել Իրաքին և Սիրիային վերահսկելու իրենց մշակութային ժառանգությունը:

ԱՐՎԵՍՏԻ ԳՈՐԾԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՊԱՀՈՑ

Հաշվառումների թիվը **49,558**

Որոնումների թիվը **33,886** միլիոն

Ինտերպոլի՝ գողացված արվեստի գործերի տվյալների պահոցը պարունակում Ինտերպոլի անդամ երկրների և միջազգային գործընկերների (Թանգարանների միջազգային խորհուրդ և ՅՈՒՆԵՍԿՕ) կողմից գողացված հայտարարված մշակութային արժեքների նկարագրություններ և լուսանկարներ; Լիազորված օգտատերերը կարող են առցանց օգտվել այդ պահոցից:

Բարեփոխումներ տվյալների մշակման բնագավառում

2016թ-ին Ինտերպոլի Գլխավոր քարտուղարությունը ընդունել է բարեփոխման նախագիծ, որը վերաբերում է կազմակերպության վերահսկման մեխանիզմներին: Փոփոխությունները վերաբերում են տվյալների մշակման Ինտերպոլի կանոններին և Ինտերպոլի Ֆայլերի վերահսկման հանձնաժողովի գործունեության իրավական նոր շրջանակին:

Տվյալների մշակման Ինտերպոլի Կանոններում կատարված փոփոխություններով հստակ սահմանվում է տվյալների մշակման բոլոր մակարդակներում առկա պարտականությունները. ԱԿԲ-երի դեպքում՝ պատասխանատվությունը վերաբերում է իրենց կողմից տրամադրված տվյալներին, Գլխավոր քարտուղարության դեպքում՝ այդ տեղեկություններն օգտագործելուն և կուտակելուն, անդամ երկրների դեպքում՝ ձեռք բերված տվյալներն օգտագործելուն և իրենց ազգային տվյալների պահոցները թարմացնելուն:

Ինտերպոլի Ֆայլերի վերահսկման հանձնաժողովը անկախ մարմին է, որը հետևում է, որպեսզի բոլոր տվյալները, ինչպիսիք են անձնական տվյալները, մատնահետքերը, գենետիկ պրոֆիլները մշակվեն Կազմակերպության կանոններին համապատասխան:

Սա նաև հնարավորություն է տալիս անձանց դիմում ներկայացնել և տեղեկանալ Կազմակերպության պահոցներում իրենց վերաբերյալ առկա տվյալների մասին:

2016թ-ին Ինտերպոլը հատուկ աշխատանքային խումբ է ձևավորել, որում ընդգրկված են իրավաբաններ, ոստիկաններ, վերլուծաբաններ և օպերատիվ ոլորտի աշխատակիցներ՝ տվյալների մշակմանը, մասնավորապես հետախուզվող անձանց նկատմամբ հրատարակվող Կազմակերպության կարմիր անկյունով քարտերի և շրջաբերականներին առնչվող հարցերը քննարկելու համար:

Կազմակերպությունում կարմիր անկյունով քարտերի հրատարակման վերաբերյալ ստացված բոլոր հայտերը մանրամասն ուսումնասիրվում են այս խմբի կողմից, որպեսզի համոզված լինեն, որ դրանք համապատասխանում են Կազմակերպության Կանոնադրությանն ու տվյալների մշակման կանոններին:

190
ԱՆԴԱՄ ԵՐԿՐՆԵՐ

Afghanistan - Albania - Algeria - Andorra - Angola - Antigua and Barbuda

Argentina - Armenia - Aruba - Australia - Austria - Azerbaijan - Bahamas - Bahrain

Bangladesh - Barbados - Belarus - Belgium - Belize - Benin - Bhutan - Bolivia

Bosnia and Herzegovina - Botswana - Brazil - Brunei - Bulgaria - Burkina Faso

Burundi - Cambodia - Cameroon - Canada - Cape Verde - Central African Republic

Chad - Chile - China - Colombia - Comoros - Congo - Congo (Democratic Rep.)

Costa Rica - Côte d'Ivoire - Croatia - Cuba - Curaçao - Cyprus - Czech Republic

Denmark - Djibouti - Dominica - Dominican Republic - Ecuador - Egypt

El Salvador - Equatorial Guinea - Eritrea - Estonia - Ethiopia - Fiji - Finland

Former Yugoslav Republic of Macedonia - France - Gabon - Gambia - Georgia

Germany - Ghana - Greece - Grenada - Guatemala - Guinea - Guinea Bissau

Guyana - Haiti - Honduras - Hungary - Iceland - India - Indonesia - Iran - Iraq

Ireland - Israel - Italy - Jamaica - Japan - Jordan - Kazakhstan - Kenya - Korea (Rep. of)

Kuwait - Kyrgyzstan - Laos - Latvia - Lebanon - Lesotho - Liberia - Libya - Liechtenstein

Lithuania - Luxembourg - Madagascar - Malawi - Malaysia - Maldives - Mali

Malta - Marshall Islands - Mauritania - Mauritius - Mexico - Moldova - Monaco

Mongolia - Montenegro - Morocco - Mozambique - Myanmar - Namibia - Nauru

Nepal - Netherlands - New Zealand - Nicaragua - Niger - Nigeria - Norway - Oman

Pakistan - Panama - Papua New Guinea - Paraguay - Peru - Philippines - Poland

Portugal - Qatar - Romania - Russia - Rwanda - St Kitts and Nevis - St Lucia

St Vincent and the Grenadines - Samoa - San Marino - Sao Tome and Principe

Saudi Arabia - Senegal - Serbia - Seychelles - Sierra Leone - Singapore

Sint Maarten - Slovakia - Slovenia - Somalia - South Africa - South Sudan - Spain

Sri Lanka - Sudan - Suriname - Swaziland - Sweden - Switzerland - Syria - Tajikistan

Tanzania - Thailand - Timor-Leste - Togo - Tonga - Trinidad and Tobago - Tunisia

Turkey - Turkmenistan - Uganda - Ukraine - United Arab Emirates - United Kingdom

United States of America - Uruguay - Uzbekistan - Vatican City State - Venezuela

Vietnam - Yemen - Zambia - Zimbabwe

INTERPOL

INTERPOL General Secretariat
200, quai Charles de Gaulle
69006 Lyon
France
Tel: +33 4 72 44 70 00
Fax: +33 4 72 44 71 63